Սույն հաշվետովության մեջ նկարագրված բոլոր գործողությունները նպաստել են երեխաների սոցիալական ներառմանը, նրանց ֆիզիկական, մտավոր և հոգեկան կարողությունների ու կյանքի հիմնական հմտությունների զարգացմանը: Կենտրոնի կողմից տրամադրված ծառայությունների արդյունքում երեխաներին և նրանց ընտանիքներին տրամադրվել են սոցիալ-վերականգնողական խորհրդատվություն և աջակցություն, որը խթանել է երեխաների սոցիալական, կրթական, առողջապահական և ընտանիքում մեծանալու հիմնարար իրավունքների իրացումը, կանխել է նրանց սոցիալական մեկուսացումը:

Սոցիալական աշխատողների և հոգեբանի կողմից իրականացվող խմբային աշխատանքներում ներգրավվածությունը նպաստել է երեխաների փափուկ հմտությունների, հաղորդակցման և բանակցային հմտությունների զարգացմանը, երեխաները կարողանում են հաղորդակցվել կոնֆլիկտային իրավիճակներում գործածելով խոսքային հմտություններ և բացառելով ֆիզիկական ուժը, նրանք ձեռք են բերել առաջնորդական հմտություններ, տիրապետում են մեդիագրագիտության որոշ կանոնների: Արտ թերապիայի շնորհիվ երեխաների ստեղծարար միտքը զարգացել է, թերապիաները նպաստել են վերջիններիս հոգեբանական խնդիրների հաղթահարմանը: Կենտրոնում երեխաները օգտվել են լոգոպեդի ծառայությունից և հաշվետու ժամանակահատվածում ըստ մասնագետի դիտարկման առկա է դրական առաջընթաց: Պարի խմբակը նպաստել է երեխաների սոցիալականացմանը, առողջ կենսակերպին և պարային հմտությունների յուրացմանը: Խահարարության խումբը նպաստել է երեխաների թիմային հմտությունների զարգացմանը, նրանք մեծ սիրով միասին պատրաստում եմ ուտեստներ և հյուրսիրու են իրենց ընկերներին: Անգլերենի խումբը նպաստել է երեխաների բառապաշարի զարգացմանը:

Կենտրոնում տրամադրվող տաք սնունդը երեխաների համար ևս ունի կենսական նշանակություն, քանի որ դպրոցից անմիջապես հետ նրանք կենտրոն են հաճախում ու սննդային ընդմիջումից հետո երեխաները կարողանում են էներգիայով լեցուն մասնակցել հետագա գործողություններին: Շատ երեխաների համար սնունդը մեծ նշանակություն ունի քանի որ տանը այս կարիքը շատ խորն է՝ հիմնված սոցիալական դժվարին պայմաններից: Արցախից տեղահանված ընտանիքի երեխաները ադապտացվել են միջավայրին, կենտրոնում իրենց ապահով են զգում:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի մասնագիտական թիմը մասնակցել է դեպքի քննարկումների և համագործակից կառույցների կողմից արժանացել է բարձր գնահատանքի:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

- Ս/թ հոկտեմբերի 2-ին Հայկական Կարիտասի Գավառի <<Փոքրիկ Իշխան>> ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնում տեղի **<<Ոչ Բռնությանը>>** խորագրով ամփոփիչ թեմատիկ հանդիպում ծրագրի համագործակից կառույցների շահառու ծնողների և կենտրոնի բազմամասնագիտական թիմի մասնակցությամբ: https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid031Vq6FzQ715VLQrxHRdjgCXsJLWTQBqAtGJ45ayzMeSQ3E3JZiaWgx6WEEuPMRXFYl

- **«Ոչ բռնությանը»** քարոզարշավի շրջանակներում իրազեկող և կանխարգելիչ հանդիպումներ, միջոցառումներ ծրագրի շահառու երեխաների և ծնողների շրջանում https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0ihtjGQjYCQNfpknDEzMQNqAwvEBeMokd6hDHopENeEAmEGkqmfRrBw4kwWZ6wKKil